ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2021/51

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ

Բողոք բերող՝ «Ի Սի Էներջի» ՍՊԸ

Գործով ներգրավված երրորդ կողմ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/68» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Ի Սի Էներջի» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 18.06.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/68» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 10.06.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված «Ի Սի Էներջի» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 18.06.2021թ.-ին:

21.06.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/51 համարի ծածկագիրը:

22.06.2021թ.-ին ներկայացված միջնորդությամբ Ընկերությունը հրաժարվել է ներկայացրած բողոքից:

06.07.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ, Բողոքներ քննող անձը, հաշվի առնելով վերոնշյալ միջնորդությունը և հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» մասին կարգի 22-րդ կետի դրույթները, որոշել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/51 բողոքը համարել որպես ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգ և վերջինիս ներգրավվել գործով որպես երրորդ կողմ:

Բողոքներ քննող անձի 06.07.2021թ.-ի թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/2/16518-21 գրությամբ՝ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ է ներգրավվել ՀՀ ֆինանսների նախարարությունը:

30.06.2021թ.-ին, 09.07.2021թ.-ին և 16.07.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 09.07.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 16.07.2021թ.-ին:

2. <u>«Ի Սի Էներջի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Ի Սի Էներջի» ՍՊԸ-ն 18.06.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/68» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/:

Սահմանված ժամկետում www.armeps.am կայքի միջոցով, ի թիվս այլ մասնակիցների, էլեկտրոնային հայտ է ներկայացրել նաև «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերի Հավելված 1՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով, 5-րդ չափաբաժնի համար որպես ապրանքի անվանում նշվել է հետևյալը՝«Ռելսեր P50 տիպի»:

Ընկերությունը «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/68» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը (կցվում է) ՝

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /դրամներով և թվերով/	ԱԱՀ** /դրամներով և թվերով/	Ընդհանուր գինը /դրամներով և թվերով/
1	2	3	4	5=3+4
5	Ռելսեր P50	154 600 000 (Մեկ հարյուր հիսունչորս միլիոն վեց հարյուր հազար)	30 920 000 (Երեսուն միլիոն ինը հարյուր քսան հազար)	185 520 000 (Մեկ հարյուր ութսունհինգ միլիոն հինգ հարյուր քսան հազար)

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.06.2021թ. թիվ 2 արձանագրության (կցվում է) 4-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ն Հավելված 2-ով ներկայացրած գնման առարկայի անվանումը չի համապատասխանում սույն գնման ընթացակարգով սահմանված գնման առարկաներին:

Նույն արձանագրության 5-րդ կետի 3-րդ ենթակետով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի հայտը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ն զրկվել է իր մասնակցության իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունից:

Մասնավորապես՝ Ընթացակարգի հրավերի Հավելված 1՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով, 5-րդ չափաբաժնի համար որպես ապրանքի անվանում նշվել է հետևյալը՝«Ռելսեր Р50 տիպի»:

Ընկերությունը «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/68» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը՝

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /դրամներով և թվերով/	ԱԱՀ** /դրամներով և թվերով/	Ընդհանուր գինը /դրամներով և թվերով/
1	2	3	4	5=3+4
5	Ռելսեր Р50	154 600 000 (Մեկ հարյուր հիսունչորս միլիոն վեց հարյուր հազար)	30 920 000 (Երեսուն միլիոն ինը հարյուր քսան հազար)	185 520 000 (Մեկ հարյուր ութսունհինգ միլիոն հինգ հարյուր քսան հազար)

Արդյունքում, «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/68» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.06.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ն Հավելված 2-ով ներկայացրած գնման առարկայի անվանումը չի համապատասխանում սույն գնման ընթացակարգով սահմանված գնման առարկաներին:

Այսինքն, ուսումնասիրելով Ընկերության հայտով ներկայացրած գնային առաջարկը, ակնհայտ է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թույլ է տվել ձևական վարչարարություն, քանի որ գնային առաջարկում որպես առարկայի անվանում նշվել է «Ռելսեր Р50» և ընդամենը չի նշվել «տիպի»-ի բառը, ինչը հիմք է հանդիսացել «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու:

Հաշվի առնելով վերոգրյալը, գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը իրականացնելով ձևական վարչարարություն խախտել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման...:»:

Ելնելով վերոգրյալից, «Ի Սի Էներջի» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/68» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 10.06.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված «Ի Սի Էներջի» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

3. <u>«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 06.07.2021թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/2/16518-2021 գրությամբ դիմել է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Ի Սի Էներջի» ՍՊԸ-ի կողմից 18.06.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 22.06.2021թ.-ին ներկայացված թիվ 39/02-28-431 գրությամբ չի ներկայացրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով պահանջված «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/68» ծածկագրով գնման ընթացակարգի համապատասխան փաստաթղթերի պատճենները:

Նույն գրությամբ Պատվիրատուն ներկայացնելով գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ 2021թ.-ի մայիսի 14-ին հայտարարված «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար ապրանքների ձեռքբերման ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/68 ծածկագրով գնման ընթացակարգի 5-րդ չափաբաժնով մասնակցության հայտ է ներկայացրել թվով 3 մասնակից, այդ թվում «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 01020365, գործունեության հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Նանսենի փ., 19-118, Հեռ.՝ +(374)55-750-057, էլ. հասցե՝ info@ecenergy.am):

«Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից Հավելված 2-ով ներկայացված գնման առարկայի անվանումը չի համապատասխանում սույն գնման ընթացակարգով սահմանված գնման առարկաների անվանումներին: Գնահատող հանձնաժողովը վերջինիս հայտը գնահատել է անբավարար և մերժել է՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության

2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջները, մասնավորապես մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՝ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկումչափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում, սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի կողմից 18.06.2021թ. ներկայացված բողոքը համարել անհիմն, քանի որ ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/68 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը վերջինիս կողմից ներկայացված Հավելված 2-ը (գնային առաջարկը) մերժելիս գործել է իրավաչափ՝ պահպանելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետով և Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջները:»:

4. <u>Բողոքարկման ընթացակարգի կողմ՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը.</u>

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, 22.06.2021թ.-ին ներկայացված միջնորդությամբ Ընկերությունը հրաժարվել է ներկայացրած բողոքից:

06.07.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ, Բողոքներ քննող անձը, հաշվի առնելով վերոնշյալ միջնորդությունը և հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանով հաստատված «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության» մասին կարգի 22-րդ կետի դրույթները, որոշել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/51 բողոքը համարել որպես ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգ և վերջինիս ներգրավվել գործով որպես երրորդ կողմ: Բողոքներ քննող անձի 06.07.2021թ.-ի թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/2/16518-21 գրությամբ՝ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ է ներգրավվել ՀՀ ֆինանսների նախարարությունը: (այսուհետ նաև՝ Նախարարություն):

Նախարարությունը, լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով գրավոր դիրքորոշում:

5. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2021/51 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից ապրանքների ձեռքբերման նպատակով 14.05.2021թ.-ին հայտարարվել է «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/68» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 1-ին կետի 1.1-րդ ենթակետով, որպես 5-րդ չափաբաժնով նախատեսված գնման առարկայի անվանում նշված է՝ «Ռելսեր P50 տիպի»:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, 5-րդ չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել նաև «Ի Սի Էներջի» ՍՊԸ-ն:

iv. «Ի Սի Էներջի» ՍՊԸ-ն ներկայացրած գնային առաջարկով ներկայացրել է հետևյալը.

Չափա-բաժինների համարները	**Ապրանքի անվանումը**	**Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/**	**ԱԱՀ** /տառերով և թվերով/**	**Ընդհանուր գինը /տառերով և թվերով/**
1	**2**	**3**	**4**	**5=3+4**
5	Ռելսեր P50	154 600 000 (Մեկ հարյուր հիսունչորս միլիոն վեց հարյուր հազար)	30 920 000 (Երեսուն միլիոն ինը հարյուր քսան հազար)	185 520 000 (Մեկ հարյուր ութսունհինգ միլիոն հինգ հարյուր քսան հազար)

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 10.06.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ Ընկերության կողմից Հավելված 2-ով ներկայացված գնման առարկայի անվանումը չի համապատասխանում սույն գնման ընթացակարգով սահմանված գնման առարկային:

vi. Նույն արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 32-րդ կետի 2-րդ կետով սահմանված պահանջները, որոշել է «Ի Սի Էներջի» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբարարար և մերժել:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Ի Սի Էներջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը, որպես ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգ, հիմնավոր է և ենթակա բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախոսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում, սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված

տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից ապրանքների ձեռքբերման նպատակով 14.05.2021թ.-ին հայտարարված «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/68» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդ որում՝ որոշ բացառություններով, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից ապրանքների ձեռքբերման նպատակով 14.05.2021թ.-ին հայտարարված «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/68» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 1-ին կետի 1.1-րդ ենթակետով, որպես 5-րդ չափաբաժնով նախատեսված գնման առարկայի անվանում նշված է «Ռելսեր Р50 տիպի»:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, 5-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած «Ի Սի Էներջի» ՍՊԸ-ն գնային առաջարկով որպես ապրանքի անվանում նշվել է «Ռելսեր Р50»՝ առանց «տիպի» բառի նշման, ինչով պայմանավորված Հանձնաժողովի 10.06.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի 7-րդ ենթակետով արձանագրվել է, որ Ընկերության կողմից Հավելված 2-ով ներկայացված գնման առարկայի անվանումը չի համապատասխանում սույն գնման ընթացակարգով սահմանված գնման առարկային, և նույն արձանագրության 5-րդ կետով Հանձնաժողովը որոշել է «Ի Սի Էներջի» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբարարար և մերժել:

Ամբողջացնելով գործում առկա փաստերը՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ թիվ 2 հավելվածում՝ գնային առաջարկում, Ընկերությունը որպես գնման առաջկայի անվանում նշել է «Ռելսեր Р50»՝ չնշելով «տիպի» բառը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, դրանց համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը

փաստում է, որ թիվ 2 հավելվածով սահմանված գնային առաջարկում չնշված «տիպի» բառը նշանակում՝ բնութագրում է որևէ հատկություն կամ ձև (ուղղագրական, կետադրական և այլն) *(տե՛ս, Էդուարդ Բագրատի Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան», 1976),* ուստի այն չի կարող հանդիսանալ որպես գնման առարկային անվանում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Հանձնաժողովը չպետք է գնային առաջարկի մասով մերժեր Ընկերության հայտը, ուստի Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Ի Սի Էներջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը, որպես ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված բողոքարկման ընթացակարգ, հիմնավոր է և պետք է բավարարել՝ ապահովելով Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված ԳԲՔԱ-ԼՕ-2021/51 ծածկագրով բողոքարկման ընթացակարգը բավարարել:

2. Պարտավորեցնել «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/68» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 10.06.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված «Ի Սի Էներջի» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**